Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2021 թվականի փետրվարի 15-ի N 80-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2021 թվականի փետրվարի 17-ից

Տեղեկատվական ամփոփագիր

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:
Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:
Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի տարածքում կամ թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33 , 060 27 33 33 համարով:

Փոխանցումների միջոցով փոխանցում նախաձեռնողի կողմից ներկայացվող անհրաժեշտ տվյալները	· անձը հաստատող փաստաթուղթ* · դիմում փոխանցումը կատարելու վերաբերյալ՝ համակարգի կողմից հաստատված ձևով · այն երկրի և քաղաքի անվանումը, որտեղ պետք է փոխանցվեն դրամական միջոցները · գումարը և միջնորդավճարը · ստացողի անունը, ազգանունը, հայրանունը, որոնք նշված են անձնագրում
Բանկը հաճախորդին է տրամադրում յուրաքանչյուր փոխանցման կատարումը հաստատող անդորրագիր	
Փոխանցում ստացողի կողմից ներկայացվող անհրաժեշտ տվյալները**	· անձը հաստատող փաստաթուղթ* · փոխանցման ունիկալ կոդը · փոխանցողի անուն, ազգանունը · փոխանցված գումարի չափը և արժույթը · դիմում փոխանցումը ստանալու վերաբերյալ՝ համակարգի կողմից հաստատված ձևով

* Անձը հաստատող փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 1999թ. դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ:
***Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով*

սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:	
Փոխանցման արժույթը	ԱՄՆ դոլար
Ստացման արժույթը	ԱՄՆ դոլար
	Անհրաժեշտության դեպքում կարող է կատարվել արտարժույթի փոխանակում Բանկի կողմից տվյալ օրվա սահմանված փոխարժեքով:
Փոխանցման արագություն	5-10 րոպե
Մեկ փոխանցման առավելագույն գումարը	Դեպի ԱՄՆ՝ 10 000 ԱՄՆ դոլար
	Դեպի Չինաստան՝ 3 000 ԱՄՆ դոլար
Գանձվող սակագները	ԱՄՆ՝ 2%, նվազագույնը 2 ԱՄՆ դոլար
	Չինաստան՝ 2,5%-3%, նվազագույնը 5 ԱՄՆ դոլար
	· Moneytun վճարային համակարգով փոխանցումները իրականացվում են անհասցե, · շահառուն գումարը կարող է ստանալ ցանկացած Moneytun սպասարկման կետից, · միջնորդավճարը գանձվում է միայն ուղարկողից ՀՀ դրամով, տվյալ օրվա ՀՀ Կենտրոնական բանկի սահմանված փոխարժեքով:

Աշխարհագրությունը · ԱՄՆ՝ Կալիֆոռնիայի և Նևադայի նահանգներ · Չինաստան՝ China Union Pay Card-ին մուտքագրման միջոցով:	
Փոխանցման վավերապայմանների փոփոխություն	· Կատարվում է վավերապայմանների փոփոխման դիմումի ներկայացման օրը, առանց լրացուցիչ միջնորդավճարի գանձման, փոխանցողի գրավոր դիմումի և անձը հաստատող փաստաթղթի հիման վրա, այն սպասարկման կետում, որտեղից իրականացվել է փոխանցումը: · Վավերապայմանների փոփոխությունը կատարվում է համակարգի կողմից սահմանված կարգով: · Հնարավոր է փոփոխել միայն ստացող կողմի տվյալները՝ անուն/ազգանուն/հայրանուն: · Փոփոխման են ենթակա միայն չվճարված փոխանցումները:
Փոխանցման չեղյալացում	· Կատարվում է դիմումի ներկայացման օրը, առանց լրացուցիչ միջնորդավճարի գանձման,փոխանցման իրականացման նույն բանկային օրվա ընթացքում ուղարկողի կողմից չեղյալացման դիմումի և անձնագրի տվյալների հիման վրա, փոխանցված գումարի և միջնորդավճարի վերադարձմամբ: Չեղյալացման են ենթակա միայն չվճարված փոխանցումները:
Փոխանցման ետվերադարձ	· Կատարվում է հաճախորդի պահանջով և գրավոր դիմումի հիման վրա մեկ բանկային օրվա ընթացքում կամ ավելի ուշ: · Միջնորդավճարի վերադարձը կատարվում է համակարգի կողմից՝ կախված փոխանցված գումարի ետվերադարձի պատճառից: · Ետ են վերադարձվում միայն չվճարված փոխանցումները:
Փոխանցման վաղեմության ժամկետը	1 տարի

Moneytun համակարգով դրամական փոխանցումներն իրականացվում են «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի բոլոր մասնաճյուղերում:
Ֆինանսական կազմակերպության կողմից վճարման և (կամ) փոխանցման ուշացման, չկատարման կամ մասնակի կատարման դեպքում կիրառվող ընթացակարգին(օրինակ՝ վնասի փոխհատուցման), ժամկետներին և պատասխանատվության շրջանակներին, ինչպես նաև սպառողի կողմից իրականացված վճարումների և (կամ) փոխանցումների հետ կապված բողոքարկման ժամկետներին, բողոքարկման ժամանակ կիրառվող ընթացակարգերին և սպառողի կողմից դրանց կիրառման կարգին և միջոցներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://www.idbank.am/content/handling-of-customer-complaints/:
Համակարգի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք օգտվել https://moneytun.com/ կայքից:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ